— Նախ՝ պէտք է գիտնաս, որ նախատական բառ պէտք չէ գործածես եւ թէ քու ծառաներեդ նոքա միայն կենդանի են, որ խելօք վարուեցան եւ անձնատուր եղան. ուստի դու էլ պէտք է խելօք լինիս, երկրորդ պէտք է գիտնաս թէ հայ աւազակ միշտ քիչ հանդիպած է աշխարհքիս վրայ, քան թէ իրեն դրացի ազգաց մէջ, երրորդ՝ թէ ես կենացս մէջ երկիւղ ըսուած բանը չեմ գիտէր թէ ի՞նչ է եւ նոյն քու Բուղայ յեդ նաեւ չեմ վախել:

— Բայց ի՞նչ կ'ուզես դու ինձմէ, զի՞ս էլ սպաննել կ'ուզես ծառաներուս պէս:

— Ո՛չ երբեք, ես անզէն մարդ չեմ սպաննէր:

— Ոսկի՞ կ'ուզես, ահա՛,— ըսաւ եւ բարձին տակեն քսակ մը հանեց երկնցուց Միրզա Հասան ձեռքերը դողալով:

— Ոչ ոսկի եւ ոչ արծաթ, իմ ուզածս ուրիշ բան է:

— Ի՞նչ կ'ուզես, զրուցէ՛, մարդ,— ըսաւ դիւանապետը բոլոր անձամբ գողաւով եւ աչքերը խփելով, ար գիմացինին սլաքային աչքերը չի տեսնէ, վասնզի նորա հայուածքը՝ ծանր ու հանդարտ խօսուածքը սոսկալի ազդեցութիւն մը կ'ընէին իւր վրայ:

— Բոլոր դիւանի թուղթերը քու քովդ են, այնպէս չէ՞:

— Այո, անոնք կ'ուզե՞ս, ահա սա պարկերուն մէջ են:

— Ո՛չ, ամէնքը չեմ ուզէր, մէկ թուղթ մը միայն կուզիմ:

— Ո՞ր թուղթը, զրուցէ՛ տամ:

— Դու կը յիշես թէ երբ Աշոտ Արծրունեաց Տէր Նկանի բերդին մէջ պաշարած էր, քանի մը հայ իշխանք գաղտնի նպմակ գրած էին Բուղալի: